

ՄԵՍԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՒ

1967 ՏԱՐԻՈՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տարի մը եւս Աստուծոյ գթառատ ողորմութիւնը վայելեցինք եւ արդիւնաւէտ աշխատանքով մտանք 1968 տարւոյ սեմէն ներս:

Կեանքը պայքար է ըսուած է: Բացատրութիւնը ճիշտ է յառաջդիմելու տեսանկիւնէն դիտելով: Նպատակի մը հասնելու համար պայքարը քանդիչ է, այլ շինիչ է: Վասն զի, այս պարագային, պայքարը դժուարութիւնները յաղթահարելու համար է: Արդարեւ 1967ին շատ մը դժուարութիւններ յաղթահարուեցան Ս. Եկեղեցւոյս մէջ կամքի զօրութեամբ եւ աշխատանքի տոկունութեամբ: Ուստի այս պահուն ճակատաբաց եւ յաղթական կը կենանք հոս եկեղեցւոյ բարօրութեան համար աշխատող բոլոր հոգիներուն հետ եւ ըսել՝ տարի մը եւս աստուածային օրհնութեամբ մեր պարտականութիւնը կատարեցինք այս ընդարձակ համայնքին մէջ խղճի կատարեալ հանդարտութեամբ:

Ուստի մեր հոգեւորականի եւ հովիւի տարուան մը գործունէութիւնը կ'ամփոփենք ստորեւ.-

1.- ԿՐՕՆԱԿԱՆՔԱՐԱՐՈՂԱԿԱՆՔ:

Տարուան բոլոր կիրակիներուն ունեցանք աստուածային պաշտամունք Հայաստանեայց Եկեղեցւոյ Տօնացոյցին ուղղութեան եւ ոգիին համաձայն: Մեր եկեղեցւոյ մէջ ամէն Կիրակի հնչեց մեր նախահայրերու լեզուն եւ ձայնը ու մենք զգացինք անոնց ներկայութիւնը արարողութեանց ընթացքին եւ անոնց լեզուով ու զգացումով կրկնեցինք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Գողգոթայի բարձունքին վերեւ կատարած պատարագը անարիւն կերպով: Երբեք առիթ չփախցուցինք եւ աստուածային լոյսին ներքեւ Աւետարանի ոգին թարգմանեցինք ու բացատրեցինք մեր հաւատացեալ ժողովուրդին հոգեկան եւ բարոյական բարձրագոյն կեանքի մը ի խնդիր: Մեզի աջակցելու նպատակաւ ամիսը անգամ մը քարոզեց նաեւ Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեան:

2.- ՄԿՐՏՈՒԹԻՒՆՔ:

Անցեալ տարուան 35 մկրտութեան դէմ այս տարի ունեցանք 43 մկրտութիւն: Ասիկա ուրախալի եւ քաջալերելի պարագայ մըն է, որ կը նշանակէ թէ մեր համայնքին թիւը հետզհետէ կ'աճի: Մենք կը հաւատանք թէ այս թիւը առաւել պիտի աճի այն պատճառաւ որ յետպատերազմեան սերունդին եկաւ տուն տեղ ըլլալու կարգը: Միշտ բծախնդիր եղած ենք ամերիկեանին քով հայկական անունի հնչումին հայ Աւագանին մէջ: Բոլորին արձանագրութիւնը կանոնաւ որ կերպով կատարուած եւ համապատասխան վկայագիր տրուած է:

3.- ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՔ:

Այս տարի ունեցած ենք 18 պսակներ: Մինչդեռ անցեալ տարի ունեցած էինք 14 հատ: Այս 18 ամուսնացողներուն կէսը խառն ամուսնութիւն է: Նախորդին հետ բաղդատմամբ, այս ալ միթիթարական կը գտնենք, որովհետեւ

տեւ այդ 14ին 9 հատը խառն էր: Այս տարուան խառն ամուսնութեանց երկուքը իրենք արդէն խառն ամուսնութեանց արդիւնք էին: Ուրախալի է որ անոնք մեծցած են Հայաստանեայց Եկեղեցւոյ հովանիին ներքեւ եւ պսակուեցան անդ: Պէտք է քաջալերել մեր երիտասարդները որ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ պսակուին եւ անդամագրուին անոր:

4.- ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆՔ:

Մեզմէ յաւէտ բաժնուողներու թիւը այս տարի զգալի նուազում մը կը ցուցնէ անցեալ տարուած 66 թիւը 46ի իջած ըլլալով: Այս ձեւով շուրջ մէկ երրորդ նուազ կորուստ ունեցանք, որոնք մեծաւ մասամբ տարիքաւորներ էին:

5.- ԴԻՒԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ:

Մեր ծխականներէն ոչ ոք իրազեկ է թէ որքան դիւանական եւ գրասենեկային աշխատանք կայ մեր եկեղեցւոյ մէջ, որովհետեւ ոչ ոք կատարեալ տեղեկութիւն ունի մեր ծուխի տարողութեան եւ հետզհետէ աճող թիւին: Այս բոլորը յարաբերութիւն կը պահեն գրասենեակին հետ գրով կամ հեռախօսով, որ բնական է ժամանակ առնող գործեր են եւ մենք պարտաւոր կը զգանք, որպէս հեգեւոր պաշտօնեայ, գոհացում տալ բոլորին կարիքներուն: Ստացուած նամակները եւ դրկուած նամակներու պատճենները իրենց թղթածրարներուն մէջ պահուած են ապահով կերպով: Կարելոր հարցերու շուրջ միշտ յարաբերած ենք Առաջնորդ Սրբազան Հօր հետ գրով կամ հեռախօսով: Գրասենեակին մէջ կատարուած են նաեւ Եկեղեցւոյ ընթացիկ գործերէն զատ Թխական Խորհուրդի եւ ենթամարմիններու բազմատեսակ գործերը:

6.- ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀ ՈՒՐԴ:

Մեր անմիջական գործակիցն է Ծխական Խորհուրդը, որ կը բաղկանայ միջին սերունդի անդամներէն: Սրտի գոհունակութեամբ կը յայտնենք հոս թէ շատ սիրալիբ գործակցութիւն մը ունեցանք միշտ նախագահելով նիստերուն: Կ'ուզենք մասնաւորաբար շեշտել թէ Ծխական Խորհուրդը իր պարտականութիւնը լիուլի կատարած է եկեղեցւոյ պայծառութեան եւ յառաջդիմութեան համար: Հոգ տարած է եկեղեցւոյ բոլոր նիւթական եկամուտներուն ու ծախսերուն: Տոմարական կանոնաւոր դրութիւն մը ունի եւ բոլոր վճարումները կատարուած են ժողովին մէջ վաւերացուելէ ետք: Եւ եթէ երբեմն թերացումներ եղած են, ատոր պատճառն ալ Ֆիզիքական անկարելիութիւնն է, նկատի առնելով մեծ եկեղեցիի մը բազմակարիքները: Աստուածային օրհնութիւն հայցելով եկեղեցւոյ այս վարիչ մարմինն վրայ, մեր գնահատանքը կը յայտնենք կատարուած անկաշառ գործին համար:

7.- ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ:

Այս երկրորդ տարին է որ կը վայելենք մեր շնորհալի քարտուղարուհի Տիկ. Կրէյս Յակոբեանի աշխատակցութիւնն ու գործակցութիւնը: Ան շաբաթը 20 ժամ կանոնաւոր կերպով կ'աշխատի: Իր աշխատանքի ժամերն են առաւօտեան ժամը 9.30էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 1.30: Կը խնդրուի մեր ծխականներէն որ այս ժամերուն հեռաձայնեն գրասենեակ պատասխան մը ստանալու համար: Մեր քարտուղարուհին մեր ցուցմունքներուն եւ երբեմն ալ աշակցութեան շնորհիւ կը պատասխանէ բոլոր անգլերէն նամակներուն, կը մեքենագրէ ՏԱՃԱՐին անգլերէն բաժինը ու կը կատարէ առաքման բոլոր գործերը, ներառեալ շրջաբերականները, կը պատրաստէ ու կ'առաքէ անդամատուրքերու հաշուեզիւրները ու բոլոր ստացուած տուրքերը կ'արձանագրէ իրենց քարտերուն վրայ, ՏԱՃԱՐին հաշիւները կը պահէ, կ'առաքէ շաբաթական ժամուցի պահարանները՝ որ մեծ թամանակ կը խլէ իրմէ, որովհետեւ իւրաքանչիւր տուփ իր ձեռքէն առնուազն վեց անգամ կ'անցնի, եւ կը կատարէ այլ եւ այլ գործեր զոր կու տանք իրեն: Գրասենեակի մէջ մեր աջ բազուկն է ան, որուն

հրապարակաւ մեր սրտագին գնահատանքն ու շնորհակալութիւնները կը յայտնենք:

8.- ԼՈՒՍԱՐԱՐ:

Ս. Եկեղեցւոյս լուսարար Պ. Պետրոս Առաքելեան շերմօրէն կապուած է եկեղեցիին ու գրասենեակին: Անոր համար հաճոյք եւ հոգեկան մխիթարութիւն է ծառայել եւ մաքուր պահել Աստուծոյ տունը: Դուք ամէնքդ ալ ամէն կիրակի ակնատես էք եկեղեցւոյ մէջ տիրող մաքրութեան եւ կարգապահութեան: Այս բոլորը սիսթեմաթիք եւ նուիրեալ աշխատանքի արդիւնք է: Եկեղեցւոյ մէջ ան մեզի կ'օգնէ պատարագի ատեն, ինչպէս նաեւ մկրտութեան, պսակի ու թաղման կարգերու կատարման պահեպուն: Իսկ ամէն առտու կը մաքրէ ծխատան գրասենեակները, կը կատարէ մեր բոլոր բազմագրութիւնները միմիկըրան մեքենային վրայ, կը ծալլէ զանոնք ուրիշ մեքենայի մը վրայ, կը տպէ բոլոր հասցէները ատրեսովրան մեքենային վրայ եւ բոլոր առաքումները նամակատուն կը տանի ծրարներով: Մեծ օգնութիւն է մեզի համար իր ծառայութիւնները, մասնաւորաբար մերինին նման մեծ եկեղեցիի մը մէջ: Գնահատելով իր անկեղծ ծառայութիւնները մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք:

9.- ԵՆԹԱՍԱՐՄԻՆՆԵՐ:

Մեր բոլոր ենթամարմիններու տեղեկագիրներէն պիտի իմանաք իրենց գործունէութեան արդիւնքները, որոնց մեծ մասը սքանչելի գործունէութեամբ ի հանդէս պիտի գան: Եթէ ոչ միշտ, բայց յաճախ ներկայ եղած ենք իրենց ամսօրեայ ժողովներուն եւ կենդանի խօսքով քաջալերած, դաստիարակած ու խռատուած ենք զիրենք յառաջդիմելու, քրիստոնէաբար ապրելու եւ առաւել ծառայելու համար: Մեր ենթամարմինները մեր եկեղեցւոյ անբաժան մասնիկները ըլլալով առանց անոնց գործակցութեան եւ օգնութեան եկեղեցին իր լրումին չի կրնար հասնիլ: Աստուած օրհնէ բոլորը եւ առողջ պահէ անոնց անդամ-անդամուհիները:

10.- ԴՊՐԱՑ ԴԱՍ:

Եկեղեցւոյ մէջ Դպրաց Դասը ձևովիւն գլխաւոր աշակիցն է: Ուրախ ենք որ մեր հոգեւոր եղբայրը՝ Հոգ2. Տ. Օշական Վրդ. Մինասեան սքանչելի գործունէութեան լծուած ըլլալով յարատեւ կը կազմակերպէ ու կը յառաջացնէ Դպրաց Դասը: Մխիթարական է ամէն կիրակի խումբ մը երիտասարդներ եւ երիտասարդուհիներ տեսնել դասին մէջ, որոնք իրենց ձայնով կը զարդարեն ու կը վեհացնեն աստուածապաշտութեան խորհուրդը: Հ. Օշականի շնորհքը եւ գործունէութիւնը ամէն գնահատանքէ վեր է: Ան յարատեւ կը հետապնդէ իր խումբին անդամները որ եկեղեցի գան: Հ. Օշական միշտ կը խորհրդակցի մեզի հետ իր ընկերներուն մասին: Միշտ ալ քաջալերած ենք զինք եւ իր կողքին կեցած իր բարի եւ օգտակար գործերուն յաջողութեան համար: Խումբին իւրաքանչիւր անդամ եւ անդամուհի իր գործունէութեան բաժինը բերած է ոչ միայն եկեղեցւոյ մէջ, այլ եւ ընկերային ձեռնարկներու ընթացքին, գլխաւորութեամբ Դպրաց Դասի ատենապետուհի Տիկ. Հելըն Տօնապետեանի, որ ողնայարն է խումբին եւ գլխաւոր աշակիցը Հ. Օշականին: Ուրիշ նուիրեալ անդամուհի մը՝ Տիկ. Զապէլ Օտապաշեան մասնակցեցաւ Դպրաց Դասերու տարեկան համաժողովին: Խումբին անբաժան մէկ անդամուհին՝ Տիկ. Հելըն Մուրատեան իր ձեռներէց նուագակցութեամբ ոչ միայն ամէն կիրակի կը մասնակցի Ս. Պատարագին, այլ եւ հարսանեկան հանդիսութեանց եւ թաղմանական արարողութեանց ատեն կը նըլազէ երգեհոնը:

Դպրաց Դասի մէկ թեւն է Սարկաւազաց բաժինը: Մեր սարկաւազ եղբայրները կարելի կանոնաւորութեամբ կը մասնակցին Ս. Սեղանի սպասարկութեանց եւ գնահատանքի արժանի են: Վերջերս սկսանք Դպրաց Դասի անդամներէն խորան բարձրացնել երիտասարդ ուժեր վարժեցնելու եւ հետագային սարկաւազի աստիճանին հասցնելու համար զիրենք:

Հ. Օշականի ուրիշ մէկ գնահատելի գործը եղաւ կազմակերպել Ս. Եկեղեցւոյս անունով 'Ներեւան' երգչախումբ մը, որուն կ'անդամակցին Դպրաց Դասի անդամներ եւ դուրսէն ուրիշներ: Այս երգչախումբը մէկէ աւելի ելոյթներ ունեցաւ մեր եւ ուրիշ բեմերու վրայ, ու մեծ յոյս ունինք որ առաւել պիտի ծաղկի ան: Ասոր համար պէտք ունինք ձեր երիտասարդ զաւակներուն գործնական աջակցութեան:

Հոս մեր անխառն զգացումները եւ գնահատութիւնները կը յայտնենք մեր եղբօր՝ Հ. Օշականին, Սարկաւազներուն եւ Դպրաց Դասի բոլոր անդամ անդամուհիներուն, իրենց կատարած աստուածահաճոյ գործին եւ մեզի ընձեռած լայն աջակցութեան համար:

11.- ՀԻՒՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ:

Այս տարի եւս վայելեցինք քանի մը հիւր եկեղեցականներու ներկայութիւնը: Մեր եկեղեցւոյ վեցերորդ տարեդարձի տօնակատարութեան առիթով պատարագեց ու քարոզեց Գերշ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս ներսոյեան, պատարագեցին ու քարոզեցին նաեւ Պէյրութէն մասնաւոր առաքելութեամբ Միացեալ Նահանգներ այցելող Գերշ. Տ. Գնէլ Եպիսկոպոս ձէրէճեան, Երուսաղէմի միաբան Հոգշ. Տ. Ղեւոնդ Աբեղայ Սամուրեան՝ որ Ամբերիկա վերադարձած է իր ուսումը շարունակելու համար Նիւ Եորքի ռուսական Ս. Վլատիմիր աստուածաբանական ճեմարանին մէջ, Արժ. Տ. Վրթանէս Ա. Բհնյ. Փափագեան, Արժ. Տ. Արտէն Ա. Բհնյ. Անճեան, որուն հետ փոխանակուեցանք; Բարեշնորհ Յովհաննէս Ա. Սրկ. Գասպարեան եւ Գրիգոր Ա. Սրկ. Մազսուտեան, որոնք ոչ միայն սպասարկեցին այլ եւ քարոզեցին: Իսկ Արժ. Տ. Կեւոն Բհնյ. Առաքելեան երկիցս այցելեց Մայր Տաճարի հարցով:

12.- ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ:

Մեր եկեղեցւոյ ժողովներէն դուրս մասնակցեցանք նաեւ Թեմական Պատգամաւորական ժողովին եւ Հոգեւորականաց Համագումարին ի Տիթոյթ, եւ Հայ Հայ եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան Համագումարին ի Փօլինկ, Նիւ Եորք նահանգի մէջ: Իսկ օտար շրջանակներէն ներս Մէս. Գառնսըլ ավ Զվըջըսի, Նիւ Ինկլէնտ էփիմէնիզըլ Գանճըրըսի եւ անոր Փլէնինկ յանձնախումբի ժողովներուն, Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով, ներկայացնելով Նիւ Ինկլէնտի Հայ եկեղեցին եւ Առաջնորդարանը: Մեծ հետաքրքրութիւն կայ Հայ եկեղեցւոյ հանդէպ օտար շրջանակներուն մէջ:

13.- ԴՊՐՈՑՆԵՐ:

Միշտ հետաքրքրուած ենք մեր Հայ եւ Կիրակնօրեայ Դպրոցներով: Երբեմն այցելած ենք Հայ Դպրոցի դասարանները եւ բոլոր աշակերտներուն հարցումներ հարցուցած եւ իրազեկ դարձած ենք անոնց ստացած հայեցի ուսման: Ներկայ եղած ենք դպրոցական հանդիսութեանց եւ ատենախօսութիւններ ըրած ու շեշտած ենք կարեւորութիւնը հայ լեզուին: Գնահատելի է Խնամակալութեան ջանքերը եւ անոր անխոնջ եւ իրաւ ազգասէր ատենապետ Պ. Տիգ Մուրատեանի զոհողութիւնները, ինչպէս նաեւ վարժուհիներու անկեղծ աշխատանքները:

Իսկ Կիրակնօրեայ Դպրոցին բերած ենք մեր բաժինը ամիսը անգամ մը այցելելով ու քարոզելով, եւ ամիսը անգամ մըն ալ եկեղեցւոյ մէջ իրենց համար անգլերէն լեզուով քարոզելով: Յաւով ընդունած ենք նախկին տեսուչ Պ. ձան Արոյեանի հրաժարականը, բայց ուրախ ենք որ զինք անձնուիրաբար ու մեծ եռանդով փոխարինեց Տիկ. Սառա Կիւլիսսեան, աջակցութեամբ Տիկ. Կրէյս Գարիէլեանի: Նոր տեսչուհին միշտ կը հաղորդակցի ու կը խորհրդակցի մեզի հետ, նախորդին նման, ու կը հետեւի մեր ցուցմունքներուն ու թելադրութեանց: Ենթոհիւ ուսուցչական կազմին անխոնջ աշխատանքին լաւ ընթացքի մէջ է Դպրոցը: Մեր օրհնութիւնները կը յղենք ուսուցչութեան եւ աշակերտութեան:

14.- ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՍԱՐԱՆ:

Որպէս զի հասակաւորներու կրօնագիտութիւնը զարգացնենք մասնաւոր  
Լսարան մը հաստատեցինք, որ տեղի կ'ունենայ ներկայիս ամիսը անգամ մը,  
Կամուան շորրորդ երկուշաբթի գիշերները: Ներկայիս Հայր Օշականին հետ կը  
դասախօսենք փոխն ի փոխ:

Շատ փափաքելի է որ հետզհետէ աւելնայ ներկաներու թիւը որովհետեւ  
մօտ առնենք Պատարագի բացատրութեան պիտի սկսինք եւ ամէն մարդ պէտք է  
սորվի անոր իմաստը:

15.- ՏԱՃԱՐ:

Մեր աշխատանքի արդիւնքներէն մին է 'Տաճար' ամսաթերթիկը, որուն  
տպագրական քանակը հետզհետէ կը բարձրանայ անոր գտած ընդունելութեան  
շնորհիւ: 'Տաճար'ը կրօնաթերթ մը չէ, այլ եկեղեցւոյ լրատուն: Մեծ հե-  
տաքրքրութեամբ կը կարդացուի ան իր պարունակած այլազան լուրերուն համար:  
Այս լուրերը կը յայտնեն եկեղեցւոյ աշխուժութիւնը: Կը խնդրեմ որ անոր  
ծախսերը Միական Խորհուրդի պիտեմքէն վրայ չծանրացնէք, այլ ամէն ընթերցող  
իր կարողութեան չափով մասնակցի ծախսերուն:

16.- ԱԻՏԱՐԱՆԻ ՅՈՒՔԵՐ:

Դարձեալ մեր քունի ժամերէն ժամանակ տրամադրեցինք ու շարունակեցինք  
մեր 'Աւետարանի Յուրբեր' կրօնաբարոյական սիւնակը 'Պայքար' օրաթերթին  
մէջ: Միթարուած կը զգանք անոր համար որ մեր աշխատանքը յուժանաբար չի վատ-  
նուիր, այլ կը կարդացուի բազմահազարներու կողմէ ու կը գնահատուի: Ամէն  
կողմէ թելադրութիւն եւ առաջարկ կ'ըլլայ մեզի զանոնք հատորներու վերածե-  
լու: Արդէն վեց հատորներ կը կազմեն ցարդ գրուածները եւ հրատարակութեան  
համար կը սպասեն մեկենասներու:

17.- ԱՅՑԵԼ ՈՒԹԻՒՆՔ:

Տարուան ընթացքին այցելած ենք մեր ծուխի բոլոր հիւանդներուն եւ  
սգաւորներուն հոգեւորապէս միթարելու համար զանոնք: Տուած ենք ծխական  
այցելութիւն այնքան որքան կարելի եղած է այս ընդարձակ համայնքին մէջ  
մեր անմիջական եւ պարտադրիչ աշխատանքներէն դուրս:

18.- ԱՐՏԱՔՈՅ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ:

Տարուան ընթացքին երկու անգամ պատարագած ենք Լինի մէջ, բազմաթիւ  
անգամներ Ուոթրթաունի եւ Փրաւիտէնսի մէջ կատարած ենք թաղմանական արարո-  
ղութիւններ եւ կամ մասնակցած: Խօսելու հրաւիրուած ենք եկեղեցիներէն եւ  
մշակութային կազմակերպութիւններէն:

19.- ՄԵՐ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԵՏՔԸ:

Մեր եկեղեցին պէտք ունի օգնական երիտասարդ ոյժի մը, հոգեւորական  
կամ աշխարհական, որուն գործը պիտի ըլլայ հաւաքել մեր մանուկները եւ մեր  
պատանիները ու կազմակերպել երիտասարդական նոր շարժում մը ազագայ եռուն  
ու գործունեայ ծխականներ պատրաստելու համար: Այսպիսի ոյժի մը բացակայու-  
թեան այդ անհետաձգելի եւ կարեւոր գործը կամաւորաբար դուք պէտք է ստանձ-  
նէք, իւրաքանչիւրդ ճիւղի մը կամ հատուածի մը պատասխանատուութեան կոչուե-  
լով: Ասոնք կ'ըսենք անոր համար որ Գիզիքապէս անկարելի է մէկ հովիւին  
հասնիլ այս ընդարձակ համայնքին բոլոր կարիքներուն, եւ օրէ օր աճող ու  
տարածող պահանջներուն:

Մեր տարուան մը գործունէութիւնը այս սեղմ տողերու մէջ ամփոփելով եւ ձեր ուշադրութեան յանձնելով կ'ուզենք յայտնել թէ այդ բոլորը ըրած ենք խղճի մտօք: Այս առթիւ կ'ուզենք նաեւ մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնել բոլորիդ որ մեզի աջակցեցաք եկեղեցին պայծառացնելու համար: Ձեր զոհողութիւններուն շնորհիւ եկեղեցւոյ պարտքը զգալի կերպով նուազած է, բայց պէտք ունինք ամբողջական շնջումին, որմէ ետքը պիտի սկսի եկեղեցւոյ զարգարանքները:

Վերջացնելէ առաջ մեր խօսքը, կ'ուզենք յիշեցնել թէ անցեալ տարի մեր 15 տարուան գործունէութենէն ետք մեր թնուներ օրակարգին վրայ դրուած էր որպէս վերընտրելի: Առաջնորդ Սրբազան Հայրը դիտողութիւն ըրաւ այդ մասին թէ ք մեր թեմին մէջ գործնականօրէն որեւէ տեղ հովիւի ընտրութիւն չկայ ու բոլոր հովիւներ ենթակայ են Առաջնորդին ու կը նշանակուին անոր կողմէ:

Ուստի անսալով Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգին այժմ կը հրատարինք մեր ընտրեալ հովիւի հանգամանքէն ու կը շարունակենք այսուհետեւ մեր պաշտօնը ուղղակի Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով:

Կրկին շնորհակալութիւններ մեր անձին ու մեր գործին հանդէպ Ձեր ցուցաբերած համակրութեան համար: Կ'աղօթենք որ մեր Երկնային Հօր օրհնութիւնները իջնեն բոլորիդ վրայ յորդահոս անձրեւի նման եւ օծէ բոլորդ աստուածային շնորհքով:

*Բաբգէ Ա. Քհնյ. Մագսուտեան*

Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան  
Հոգեւոր Հովիւ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ